

րակոյս բարկութեամբ և զայրացմամբ բորբոքած աչքերով անշարժ իրեն երեսը նայեցայ. և ինքը իմացաւ և ըմբռնեց մէկէն որ իր առաջարկութիւններն վրաս խոր տպաւորութիւն մը ըրեր էին. — Ըսէ ինծի, կանչեց յանկարծ. դո՛ւ ալ թշնամի մը ունիս, և արդեօք սաստիկ կը ցանկաս իրմէն վրէժդ առնելու: — Այո՛, կրկնեցի լալով. ինչպէս իմ սիրտս կը կարգաս: — Մի՛ լար, որդեակ իմ, մի՛ լար, Հանգիստ կեցիր մանաւանդ. տասը տարին կ'անցնի, և երկուքնիս ալ լիովին մեր վրէժը հանած կ'ըլլանք: — Երկուքնիս ալ, հարցուցի մէկէն. բայց դու հետս ինչ ընելիք գործ ունիս: — Որչափ որ դու չես կարծեր, քու թշնամիդ՝ նաև իմն ալ է. այն զոր ես անհրաժեշտ կ'ուզեմ՝ կորսնցնել, նոյնն է ուսկից դու կ'ուզես վրէժ խնդրել: — Աղէկ ուրեմն, ըսի. ինչ է թշնամոյդ անունը: — Դու ինքնին կրնաս ըսել զայն. քու հակառակորդդ անունն է: — Կարելի բան է: — Այո՛, քու թշնամիդ՝ նաև իմն է. այն որ տասը տարիէ ետեւ մեր ձեռքովը պիտի իյնայ, Պաւտիի կոմսն է: —

Այս լսելուս՝ ափշած մնացի: Այս անհասկանալի մարդը երթալով ինծի համար անիմանալի և խորհրդաւոր բան մը կը դառնար: Ինչպէս կրնայ ասիկա, կ'ըսէի մտքէս, իմ Պաւտիի կոմսը մահացու կերպով ատելս գիտնալ, մինչդեռ ես բնաւ մէկու մը չեմ յայտնած: Բայց ո՞վ է ասիկայ, ուսկից կու գայ, ինչ կը մտածէ, և ինչո՞ւ ինքն ալ իմ թշնամիէս կ'ուզէ վրէժ խնդրել: Մինչդեռ այս հարցմունքներս կ'ընէի, մէյմ'ալ եկեղեցւոյն զանգակին տխուր և դանդաղ զանչիւնը կը լսուի: Իմ ընկերս այն ձայնը լսելուն, իր ընկղմած խորունկ մտածութենէն կը սթափի. ձեռքէս կը բռնէ, և աչքերը գրեթէ դուրս ելած՝ կը կանչէ. Ուրեմն, որդեակ իմ, միատեղ վրէժնիս կը հանենք: Երգուընցիր լամբերտին գլխոյն վրայ, որ հիմա դահճին տապարին տակ իյնալու վրայ է:

Ս Ա Ր Դ Ք

(Տես էրես 230)

Գ Ի Ր Ք Ե Ր Ր Ո Ր Դ

ԱՐՈՒԵՍՏԱՒՈՐԸ ԵՒ ՏԱՆ ՇԽՈՒԹԻՒՆԸ

Ա

Հողը ամեն էակի հայր է, ամենայնի ծնող: Իրմէն ծագեցաւ ամենայն մարմին և հլութեամբ 'ի նոյն դարձ կ'ընէ: Ամենուն սրտին մէջ լռելեայն կը խօսի ու հաւասարութիւնը կը զուրցէ. բայց և այնպէս թշնամութիւնը, հակառակութիւնը վերցընել չկրնար: Վասն զի, թէպէտ ամենը եղբայր և եղբայրակից են՝ օրէնք մը կայ դարանակալ, որ բաժանումը և ապականութիւնը՝ անհրաժեշտ պայման մը կը համարի էութեան:

Բայց և այնպէս, բարերար հաւասարակշռութեան մը վախճանաւ, ամենայն էակ՝ այս օրինաց հակառակելու համար ընդունած է 'ի բնութենէ յատուկ իմացական շառաւիղ մը: Անով իր դարանակալաց դէմ կը զգուշանայ և անձնական էութիւնը կը պաշտպանէ: Եակի մը կենաց պաշտպանութեան առաջին և ամենաբնական պայմանը՝ բնակարանի մը պարսպաց ապաւէնն է. տեղի անքոյթ թշնամեաց արշաւանքներէ, և վայր հանգստեան ընդդէմ անձրեաց, հողմոց և ցրտոյ:

Այս հասարակաց բնածին հակամիտութեանը կը հետևի նաև սարդը: Իր քրտամբ կանգնած բնակարանի մը որմոց մէջ ամփոփուելով, կ'անհետանայ ամեն աչաց: Թշնամին կը հասնի անոր սեմոց ափունքը. վեր վար կը դառնայ. չորս կողմը կը շրջի. մուտք մը կը փնտռէ. անօգուտ աշխատանք: Մետաքսեայ պարիսպ մը անջրպետ է 'ի մէջ հալածելոյն և հալածչին:

Այսպէս մէջը ապաւինած սարդը, ինքզինքը կը պահպանէ. այլ և միանգամայն, իբր արթուն որսորդ, ուշա-

դիր կ'ըլլայ, կը սպասէ որ որս մը իր պարսպին քովէն անցնի, կամ բնակարանին շրջակայքը թափառի: Իբր բերդի մը պահապան՝ հազիւ թէ զգայ որ ցանկապատին մերձեցող կայ, դուրս կը յարձըկի յանկարծուստ, և անզգոյշ թափառողը գերելով՝ բնակարանը կը տանի, ուսկից անկենդան կ'ելլէ:

Բ

Ըստ այլ և այլ սարդից կը տեսնենք որ ճարտարութիւնը երթալով կը կատարելագործուի. և կարծես թէ ուշադիր մտածութիւնը պիտոյքը կը կշռէ, բնակարանին այլ և այլ մասանց բաշխումը ըստ ճարտարապետական օրինաց գործադրելով: Այսպիսի է այն տեսարանը որ կը ներկայացնեն մեզի մէկքանի տեսակ սարդը գլխաւորապէս: Իբր ճշմարիտ ճարտարապետ, ուսեալ ոչ դպրատան մը ճղճիմ վարդապետութեամբ, այլ նովին իսկ բընութեան անսխալ դաստոտութեամբ, գործաւորը՝ իր բնակարանին հիմունքը դնելու ատեն, անոր ծառայութեան վախճանը կը դիտէ: Ուստի և ուշադիր դիտողութեամբ կը տեսնես նախ գաւիթ մը, որ ձագառաձևի մը լայն կողմն է. յետոյ կու գայ հարսին կամ փեսային սենեակը, տեղի հանգստեան և ապաստանի: Եւ ոչ այսչափ միայն, այլ և ոմանք դարձեալ կանխագուշակ իրենց պիտոյից, գիտեն որ իրենց բնակարանին մէկ անցքը բաւական ապահովութիւն մը չէ: Վասն զի թէ որ զօրաւորագոյն թշնամի մը բնակարանը պաշարելով մուտքը գրաւէ, և կամ աւելի յանդգնելով զայն բռնաբարէ, ուսկից կրնան օգնութեան ձեռք մը յուսալ: Թող որ ըստ պիտոյից հարկ է նաև համառօտագոյն ճամբայ մը փնտռել որսին վրայ յանակնկալս իշնալու համար:

Պէտք է ուրեմն ուրիշ միջոց մը մտածել աւելի զգուշաւորութեան համար. և այս միջոցը՝ երկրորդ անցք մըն է որ մտից հակառակ կողմը կը պատասխա-

նէ. ծառայելով ըստ դիպաց եթէ իբր ելք և եթէ իբր մուտք:

Այլ այն որ դեռ ևս զարմանալի կը գտնենք ոմանց սարդից վրայ, է այն բնագոյման լոյսը՝ որ դրան մը գիւտին կը մղէ զանոնք:

Հոս կարծես թէ սարդից տեսակը կատարելագոյն քաղաքականութեան մը կը դիմէ: Ոչ միայն ապահով ու հանգիստ բնակարան մը կը պատրաստէ, ուր աշխատութենէ ետքը գլուխը հանգչեցնէ, այլ և դռնակով մըն ալ կ'ամրացնէ, դռնակ՝ որ ծխնիի մը վրայ կը շրջի: Զգուշութիւն զարմանալի, որուն վախճանը անշուշտ կ'ըմբռնէ: Այդպիսի կանոնաւոր երևոյթ մը, և ոչ իսկ բարձրագոյն կենդանեաց վրայ կը տեսնենք. և սակայն սարդը ամենափոքրիկ էակներէն մէկն է:

Պրագիլ մանր սարդ մը կայ, որ իր բնակարանը անմիջապէս ոստայնին կեդրոնը կը կախէ: Երբ կը տեսնէ որ վտանգ մը կը սպառնայ իրեն, կամ թշնամի մը զինքը կը դիտէ, շուտ մը բնակարանը կը փութայ, ու հազիւ թէ մէջը կը մտնէ, անմիջապէս դռնակ մը վրան կը գոցուի:

Ահա ինչպէս տրամադրեալ է այն էակը, որուն ճակատագիրը կարծես թէ անիծից օրէնքով մը վճռեալ է: Միշտ մենաւոր, առանձնակեաց, իբր ազգատեաց՝ իր նմանէն կը փախչի: Ամեն դին իր կենաց դարանակալ կը տեսնէ. և նոյն իսկ իբր թշնամոյ մը, իր ազգակից եղբօրն արիւնը ծծելու չինայեր: Երկշուտ և վատասիրտ, բնակարանի մը պէտքը ունէր. բոյն մը՝ ամենայն զգուշութեան միջոցներով ամրացուցած:

Գ

Միկալ և իր թնակարանը:

Միկալը՝ սարդից մէջ ամենահուշակաւորներն են: Ասոնց ազգը խառն կը բովանդակէ մեծագոյն և մանր, զօրաւորագոյն և անզօր սարգեր: Բայց բը-

նազգումը, այն առաջնորդ գաղտնի գործութիւնը, որ անբան կենդանեաց գործոց ուղղին է, անանկ ճարտարութեան մը ընդունակ կ'ընէ զիրենք, որ անգորին տկարութիւնն ալ անով կը քողարկի:

Ասոնց մեծագոյնները Ամերիկա կը գտնուին. անանկ արտաքոյ կարգի մեծութեամբ, որ սրունքնին երկնցուցած՝ ութը ինը բթաչափ տրամագծով բոլորչի միջոց մը կը գրաւեն: Բնակարաննին՝ թռչնոց բոյն կը նմանի, որ ծառոց և ուրիշ խորշերու մէջ կը շինեն՝ և ծառոց ճիւղերուն վրայ թափառելով՝ մինչև մանր թռչուններ ալ կ'որսան:

Ասոնց փոքրագոյն տեսակները մեր կլիմաներն ալ կը գտնուին, և առջիններուն նման՝ զիշերները կ'ելլեն կը թափառին ապրուստնին հոգալու համար:

Բնակարաննին գետնի տակ կը շինեն. խորունկ ծակեր կը բանան, չորս դին մետաքսահիւս մագաղաթ մը կը պատեն, բերանը դռնակ մը կը յարմարցընեն, և իբր մենակեացք՝ ցորեկը մէջը կը ճգնին:

Դ

Տեսաք առանձնութեան. թողունք որ հանգիստ ապրին: Աշխարհքս մեծ է և գրաւած տեղերնին ոչինչ:

« Ի՞նչ նեղութիւն կու տամ քեզի, անգութ », — կարծես թէ ըսել կ'ուզէ, երբ առանց խնայելու, իր բնակարանէն զրկելով զինքը, կերպարանքը նայիմ. — « Ի՞նչ զրկում կամ վիշտ քեզի կը հասցնեմ: Տկար եմ, իրաւ է. բայց դու զօրաւորդ՝ ի՞նչ իրաւամբ զիս ոտքի տակ կ'առնես, երբ ես քեզի չեմ մեղանչեր: Անհանգուրժելի է տեսութիւնս, կ'ըսես. բայց անոր համար ալ քեզնէ կը փախչիմ. խաւարը կ'ընտրեմ որ քեզ չզրկուեցնեմ: Եւ է արդեօք բաւական պատճառ արտաքին պատրողական երևոյթ մը, մահագոյժ դատապարտութեան մը համար, երբ

չատ անգամ սե մորթի մը տակ աշնուական սիրտ մը կը բաբախէ: Մի և նոյն է այն պատճառը որ հաւասարապէս երկուքներնու ալ կենաց լոյսը պարզեց, քրեզ՝ ազնուագոյն տէր կարգեց, զիս՝ անարդ ստորաքարչ. սակայն ամենն ալ անոր պարգէն է: Մի ապերախտիւր և մի անգթանար ստորնագունից վրայ, որ քեզի վնաս մը չունին: » —

Այս ամենայն լռելեայն կը զուրցէ. ցած և չսուելու ձայնով մը սրտիս կը խօսի, ազատութիւն և զթութիւն պաշտելով: Բայց հետաքրքրութիւնը քողարկելով սրտիս բնական զիջողութիւնը, զիս քննութիւններէ՝ հարցմանց կը մղէ: — « Համբերէ, կ'ըսեմ, էակ հալածանաց. քիչ մը ինծի ուշ դիր. հարցընեմ, պատասխան տուր. մի վախնար ինծմէ. չես տեսնար յիս բարեկամ մը: » —

Կը նայիմ կերպարանքին. ափսոս. կը խօսի, բայց ամեն բան չզուրցեր. կամ թէ կը զուրցէ՝ բայց ես չեմ հասկընար: Կը մերձենամ ձեռքովս. ի՞նչ սարսափ, ի՞նչ տազնապ: Փախուստ կը փնտրէ և փախուստ շտապողական: Ալ յիս բարեկամ չտեսներ. այլ թըշնամի, և թշնամի խիթալի: Այսչափ երկիւղալի է ուրեմն ձեռքի մը շարժումները. այսչափ կասկածելի մատի մը մերձաւորութիւնը:

Ճշմարիտ է որ ձեռքի մը շարժմանը վրայ հաստատեալ է կենաց շնորհքը կամ մահու պատիժը. բայց այն՝ իշխանաւորաց նկատմամբ: Իսկ զիս ո՞վ իշխան կարգեց այդ ձրից: Եթէ բնութեան ձայնին ուշ դնեմ, այսպէս կը դուչէ յիս. « Ես գթութեան տէր դրի դքեզ: »

Հարկ է ուրեմն որ առանց շարժման նստիմ սարդիս առջին. հարկ է լռելեայն դիտեմ զինքը. տեսնեմ իր շարժումներն. լսեմ անոր անձայն բարբառը, և անձայն ակնարկութեամբ մը իմաստասիրեմ անոր խօսակցութիւնը:

ե

— « Ինծի կը նայիս հետաքրքրաբար. զիս կը զիտես ուշադրութեամբ. զիտէ և հասկըցիր Բարձրելոյն իմաստութիւնը: Կերպարանքս չխաբէ զքեզ. ամենայն մարմինը 'ի հողոյ ստեղծեալ են. նման և հաւասար են իրարու. բայց արտաքին երևութով մէկմէկէ կը տարբերին: »

« Եթէ կեանքս զիտնալ կ'ուզես, պարզ է: Այն ճակատագիրը որ զքեզ աշխարհք ձգեց ու լուսոյն սիրցուց, նոյնը զիս ալ զիշերային զբօսանաց տրամադրեց: Բնակութիւնս հեռի 'ի չփոթից, հեռի 'ի խռովարար ընկերութեանց կ'ընտրեմ. և այն ալ պարզ և անզարդ. բայց հանգիստ և ապահով, ուր անհոգ հանգչեցնեմ զուխս: »

« Ի՞նչ պէտք են մեծաշէն ապարանից խուռն զարդարանքները անոր՝ որ իր նմանեաց ընկերութենէն իսկ կը փախչի. ծակ մըն ալ շատ է այնպիսւոյն: »

« Բայց կը հասկընամ. անունս գիտնալ կ'ուզես. գիտցիր ուրեմն որ զիս Որմնաճու Միկայ¹ կը կոչեն. ճարտարութիւնս է որ զիս այդ անուանակոչութեան արժանի ըրեր է: »

« Եւ համառօտ այս է արուեստիս պատմութիւնը: Բնակարանի մը պէտք ունիմ. 'ի խնդիր կ'ելլեմ գետնի մը, խոտերէ մերկ և քիչ մը բարձրկեկ, որ անձրևի ջուրը չկարենայ յարկս ծածկելով բնակարանս թափանցել: Ի՞նչ կամ երկու ոտք խորութեամբ խողովակ մը կը փորեմ, միշտ մի և նոյն տրամագծով, և այնչափ լայն՝ որ առանց նեղութեան մէջը կարենամ շորժիլ: »

« Բայց զիտես որ հողը անհաստատ՝ կընայ խողովակին հողերէն թափվել փիլ ու կամաց կամաց բնակարանս լեցընել: Այս անպատեհութիւնը արգիլելու համար, կոշտ կերպով ոստայ-

նի խաւով մը կը հիւսեմ խողովակին չորս զին, և այն խաւին վրայ ուրիշ խաւ մըն ալ կը ձգեմ, փափկագոյն և մետաքսակերպ: Այս կերպով հողուն խստութիւնը, ներս դուրս ելած մտածատեն, չկրնար փափուկ մարմնոյս վընասել: Այսպէս է որ ինծի հանգիստ բնակարան մը կը պատրաստեմ, մաքրափայլ մետաքսապատ որմերով: »

— « Աղէկ, ըսի մտքովս, բնակարանիդ հանգիստ ու մաքուր ըլլալը կ'ընդունիմ. բայց եթէ երբեք քունդ խոր կոխէ, չիմանաս որ թշնամի մը մօտ կայ ու ներս կը մտնէ զգուշութեամբ, ինչպէս կընաս ազատիլ անոր ճանկերէն: »

— « Մի տարակուսիր, պատասխանեց լռելեայն. ատոր ալ դարմանը սորվեցուցած է ինծի բնութիւնը: Նախ բան մը չկրնար հանդիպիլ բնակարանիս մօտ որ ես չիմանամ. վասն զի, թէպէտ և բնակարանիս խորը ըլլամ, այն մետաքսահիւս որմին վերէն 'ի վար միակերպութիւնը իբր հաղորդիչ ելեքտրական թել մըն է՝ որ ամենայն ձայն ինծի կը հասցընէ: »

« Սակայն զգայարանացս միայն չեմ վստահիր. կայ ուրիշ միջոց մը որ 'ի գործ կը դնեմ՝ բնակարանիս մուտքը պահպանելու համար: Այդ միջոցը բնակարանիս հետքը բոլորովին անհետ ընելն է: Արդ մօտիկ ըրէ: Եթէ Միկայի մը բնակարանը գտնել կ'ուզես, մեծ ուշադրութեան կարօտ ես: Թերևս աչքիդ զիմացն ալ ըլլայ, և դու չիմանաս: Այն հողին երեսը որ կը կոխես՝ թերևս այլ և այլ բոյներ կը պարունակէ, և սակայն տեսութենէդ կը փախչին: Եւ զիտես պատճառն ինչ է. զրունակ մըն է, բոլորչի հատուածիկ մը, որ շրջապատող հողէն չիզանազանիր. խորամանկութեան միջոց մը՝ որով մեր թշնամեաց խորամանկութեանը կը պատասխանենք: »

« Մտածէ մէյմը զիս որ բնակարանիս խողովակին հիւսուածքը լմնցուցած, անոր դռնակը պիտոր հիւսեմ, յարմարցնեմ: Երկայն գործողութիւն

1 Պշ. Mygale maçonne.

մըն է և ձանձրալի . բայց կենաց արեւուն համար՝ կ'աթէ ամենայն աշխատանք և ձանձրութիւն :

« Կլոր մուտքը՝ կլորած և խփիկ մը պիտոր գոցէ : Այս կլորած և խփիկը գետնին հաւասար է , և հողով անանկ ծածկած՝ որ քովի գետնէն չորոշուիր : Եւ որ զարմանքդ բերէ պիտոր անշուշտ , երեսուն կարգ ոստայնով հիւսուած է վրայէ վրայ շարուած , և իւրաքանչիւր կարգին մէջ ալ կարգ մը բարակ հող : Ասով մէկ դռնակը վաթսուն դռնակէ բաղկացեալ կրնայ զուրցուիլ :

« Բայց աւելի զարմանալին , որ ոչ արուեստը և ոչ ժամանակի փորձը սորվեցուցեր է , դռնակիս ծխնին է : Այն երեսուն խաւ ոստայնը որով դռնակս բաղկացած է , մուտքին մէկ կէտի վրայ առանձին առանձին յարեալ են : Անով տեսակ մը զսպանակ կը ձևանայ , հիւսուածքին առաձգականութեամբ , որ դռնակը բացուելով՝ թողուածին պէս՝ նորէն առաջին դիրքը կը դառնայ :

« Եւ այնպէս ճիշտ կը գոցէ կլորածէն մուտքը , որ շատ դժուարաւ կրնայ որոշուիլ : Վասն զի դռնակը զլիսիւյր դարձած կէս կոնած և մը կը նմանի , որուն լայն կողմը քիչ մը չլթունք կը ձևացնէ . մուտքն ալ անոր համապատասխանելով քիչ մը ձաղառած է : Խփիկը մուտքին վրայ իյնալով , ճըշդիւ անոր շրթունքները կը շօշափէ :

« Կը զարմանաս համբերող երկայնամուտեանս վրայ . արդար է : Կեանքը գանձ մըն է որուն համար ամեն բան կը զոհուի . բայց դեռ ինծի ուշ զիր :

« Թէպէտ դռնակով մը ամբողջած հանգիստ եմ բնակարանիս մէջ , բայց ապահով չեմ թշնամեացս խորամանկութենէն ազատելու : Կրնայ ըլլալ որ թշնամի մը բնակութեանս հետքը զրտնայ . և այն ատեն ոչինչ բռնութեան մը առջին դռնակս տեղիք կրնայ տալ ու զիս մատնել : Բայց այս վտանգին դէմ ուրիշ միջոց մըն ալ ունիմ . սողնակ մը որ ծխնիին հակառակ կողմը

կը պատասխանէ , զիս վտանգի ա տեն կը փրկէ :

« Այդ սողնակը ոչ երկաթեայ է և ոչ փայտաշէն , այլ ճապուկ , դիւրաթեք մարմին մը . միով բանիւ ես՝ ճանկերովս ու ծնօտիկներովս :

« Դռնակիս ներքին երեսը կորնթարդ է , և ոստայնի ամուր հիւսուածքով մը պատած : Ծխնիին հակառակ կողմը երեսունի չափ ծակտիքներ կան : Երբ վտանգը զգամ , երբ թշնամոյն մերձաւորութիւնը իմանամ , ես կ'ըլլամ կենդանի սողնակը : Թաթերուս ճանկերը մուտքիս կողերուն մէջ կը խոթեմ , ու թաթերուս առջի զոյգը և ծնօտիկներուս կեռերը խփիս ծակտեաց մէջ մխելով , զայն ինծի կը ձգեմ բոլոր զօրութեամբս : Շատ զօրաւոր պիտոր ըլլայ թշնամիս որ կ'արեւնայ ինծի յաղթել :

« Բայց 'ի սէր ճշմարտութեան այս պէտք է զուրցեմ , ոչ միայն ինծի համար այլ և բոլոր ազգայնոցս նկատմամբ , որ ցորչափ բնակարանի մը մէջ ապահովցած ենք , զօրաւոր ենք և կըտրիճ պատերազմողք . բայց վայ մեզի եթէ բնակարանէ դուրս ձգուինք . ալ անկէ ետքը ամեն էակներէ վար մենք կ'ըլլանք , և առանց ընդդիմութիւն մ'ընելու թշնամոյն զոհ կ'ըլլանք : »

— « Ճշմարտախօս էակ » , պատասխանեցի այս ետքի խօսքերուն , դաշն ձայնով , « կը տեսնեմ որ տկարութիւնդ խոստովանելու չես քաշուիր . քեզի անարգանք չես սեպեր այն՝ որ երկշոտ բնութեանդ հետեանք է . և ոչ սնտոյ միջոցներով և ստութեամբ կ'ուզես ծածկել այն պակասութիւնը , որուն մէջ յանցանք մը չունիս : Յայտնի է ինծի ըսածիդ ճշմարտութիւնը՝ ազգակցացդ գերութեանը ականատես եղած ըլլալուս :

— « Բայց նաև մեր ազատութեանը մէջ ալ , զիմաց ակնարկութեամբ մը կը պատասխանէր , երկշոտ և վատասիրտ էակներ ենք : Թեթեւ շօշափմամբ մը , ամուր ազաղակով մը կամ աղմուկով մը , սրտերնիս կը լքանի . և ինչ-

պէս թէ ջղային առաձգական զօրութիւնն իսկ կորսուած, անդամալուծեալ և իբր մեռեալ՝ վերէն վար կը թօթափինք, մեր մարմնոյն ծանրութեամբը և գետնի վրայ իբր կայծակնահար՝ անշարժ կը մնանք:

— «Այդ շատ անգամ դիտած եմ, պատասխանեցի: Փորձով դիտեմ որ այդ կեղծաւորական միջոցով փախուստ կը խնդրէք ձեր թշնամեաց ճիրաններէն: Եթէ այդպէս վերէն վար իյնալով խոտերուն մէջ խառնուիք, անոնց փնտրողները աշխատանքը դերս կը հանէք. իսկ եթէ հողուն վրայ մանր կոշտերու հետ շփոթիք, ձեր անշարժութիւնը անոնց սրատես աչքը ստէպ կընայ խաբել:

— «Այդ այդպէս է. որովհետեւ ամեն էակ, որչափ ալ զօրաւոր երևնայ՝ իր տկար կողմն ունի, մինչդեռ բռնութեան իրաւամբ գտկարը կը ջնջէ, ինքն ալ շատ անգամ տկարին խորամանկութեանը զոհ կ'ըլլայ: Միով բանիւ տկարը զօրաւորագոյն զէնք մը չունենալով իր զօրաւոր թշնամեաց դէմ դնելու համար, խորամանկութիւնը ստացած է՝ ի բնութենէ, որով զօրաւորին առջին ահարկու կ'երևնայ:

— «Ուրեմն դու ալ խորամանկութիւնն ու խաբէութիւնը այդ պատճառաւ քեզի զէնք առերես որ տկարութիւնդ քողարկես: Եւ արհամարհութիւն չես սեպեր այդպէս հաւաստի պակասութիւնդ խոստովանելու:

— «Ոչ. եթէ իրական պակասութիւն մըն է՝ ի բնութենէ ստացեալ և ամենուն յայտնի, սնտոի է և յիմար անոր վրայ ստութեան քօղ մը ձգելու ջանալ. անով ոչ աչաց տկարութիւնը կ'ուղղուի և ոչ մտաց կորովը:

— «Խոհեմ էակ, պատասխանեցի, իմաստութեամբ քան զբազումս կը գերազանցես դու:» —

2

Այդ Միկայլը՝ ճշմարիտ համբերութեան օրինակ մ'է: Իր ողջոյն կեանքը՝

բոյնն է, կրնանք ըսել: Փորձէ փորձէ մէյմը անոր բնակարանին դռնակը բանալու. զինքը անմիջապէս քովը կը գտնես՝ որ ամենայն զօրութեամբը անոր հաստատուած՝ գոց բռնելու կ'աշխատի: Ստէպ ընդհատէ փորձդ, հարիւր անգամ դարձիր. կը տեսնես որ անխոնջ և առանց լքանելու իւրաքանչիւր անգամուն բոյնին խորէն դռնակին պահպանութեանը կը յարձրկի:

Փորձէ մէկ կողմանէ խփիկը բանալու ջանալ, միւս կողմանէ բոյնին չորս դին փորել, բոյնը վերցընելու տանելու համար. համբերող կենդանին իբր արի պահպան՝ անշարժ դռնակին քովը կը մնայ: Յորչափ դռնակը գոց է՝ բանէ մը երկիւղ չունի: Միայն երբ դռնակը բռնութեան տեղիք տալով կը բացուի ու լոյսը մէջը կը թափանցէ, այն ատեն է որ բոյնին խորը կը փախչի:

Կտրիճ է ցորչափ բոյնին մէջ խաւարով պատսպարեալ է. բայց մէյմ՝ որ բոյնէն դուրս ձգուի, կը կորսուեցնէ բոլոր այն կտրերձութիւնը՝ որ բոյնը պաշտպանելու կը գործածէր: Լուսով՝ կը լքանի. ու հապիւ թէ կաղ ի կաղ քանի մը քայլ կրնայ ընել. ինչպէս թէ զինքը շրջապատող տարրը՝ բոլորովին օտար ըլլար իր բնութեանը:

Ուստի և գիշերային կը կարծուի. վասն զի ոչ երբեք տեսնուած է որ ինքնակամ բնակարանէ դուրս ելլէ ցորեկ ատեն: Գիշերն է իր զբօսանաց և աշխատութեան ժամանակը. այն ատենն է որ բոյնին շինութեանը կը զբաղի. և դարձեալ գիշերուան մութին պաշտպանութեամբն է որ կ'ելլէ իր կերակրիկը փնտրողները:

Իր բնակարանին մօտերը գետնին երեսը՝ այլ և այլ ոստայններ կը հիւսէ. անգոյշ միջատները մոլորելով՝ անոնց մէջ կը բռնուին, որոնք ժողովելով՝ իր քաղցը կը յագեցնէ: Նաև բոյնին մէջ ալ կը կրէ կ'ուտէ. ինչպէս որ ստէպ գտնուած են անոր խորը այլ և այլ միջատաց, նաև մեծ պատենաթեկի մնացորդը:

Կը շարունակուի: